



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարարի  
պարտականությունները կատարող  
Տիգրան Գաբրիելյան



2024թ.  
06 24

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 091 - 24

Նախաձեռնող՝

«Զանգեզուր Լոգիստիկա» ՍՊԸ  
Սյունիքի մարզ, ք. Կապան, Գործարանային 1

Գործունեությունը՝ Մեղրիի ավազակոպճային խառնուրդի երևակման 1-ին և 2-րդ  
փեղամասերում օգտակար հանածոյի արդյունահանման  
նպատակով երկրաբանական ուսումնասիրություն  
Սյունիքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 091 - 24

«21» հունիսի 2024թ.

**Սյունիքի մարզի Մեղրիի ավազակոպճային խառնուրդի երևակման 1-ին և 2-րդ տեղամասերում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն**

**Ներածական մաս.**

Ձեռնարկող՝  
Փաստաթղթի տեսակը՝

«ՋԱՆԳԵԶՈՒՐ ԼՈԳԻՍՏԻԿԱ» ՍՊԸ  
Նախնական գնահատման  
հայտ (Բ կատեգորիա)  
Սյունիքի մարզ, Մեղրի համայնք և  
Կարճևան բնակավայր

Գտնվելու վայրը՝

«ՋԱՆԳԵԶՈՒՐ ԼՈԳԻՍՏԻԿԱ» ՍՊԸ կողմից նախատեսվում է Սյունիքի մարզի Մեղրիի ավազակոպճային խառնուրդի երևակման 1-ին և 2-րդ տեղամասերում իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ՝ շինարարական խճի և ավազի արդյունահանման նպատակով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /այսուհետ՝ Օրենք ՀՕ-150-Ն/ 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 2-րդ կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Ուսումնասիրվող Մեղրիի ԱԿԽ-ի երևակման 1-ին տեղամասը գտնվում է Մեղրի համայնքի վարչական սահմաններում, 2-րդ տեղամասը գտնվում է Մեղրի համայնքի Կարճևան բնակավայրի վարչական սահմաններում: 1-ին տեղամասը գտնվում է Մեղրի համայնքից 3 կմ, Ագարակ համայնքից 4 կմ, Կարճևան բնակավայրից 4.8 կմ հեռավորության վրա, իսկ 2-րդ տեղամասը՝ համապատասխանաբար՝ 4 կմ, 2,7 կմ և 4.4 կմ հեռավորության վրա: 1-ին տեղամասը զբաղեցնում է 3.38 հա, իսկ 2-րդը՝ 0,93 հա տարածք:

1-ին տեղամասի հեռավորությունը մոտակա ենթակառուցվածքներից՝ «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ի պոչամբարից՝ 400 մ է, պոչամբարի ջրի շրջանառու համակարգից՝ 160 մ, Մեղրի Ագարակ ավտոճանապարհից՝ 170 մ, Ագարակի ոռոգման ջրագծից՝ 140 մ:



2-րդ տեղամասի հեռավորությունը մոտակա ենթակառուցվածքներից՝ Մեղրի-Ագարակ ավտոճանապարհից՝ 70 մ է, Ագարակի ոռոգման ջրագծից՝ 68 մ, նոր նախատեսվող երկաթգծից՝ 60 մ:

Տեղամասը, գտնվում է Մեղրու լեռնաշղթայի հարավային լանջերում, ներկայացնում է լեռնային, խիստ կտրտված ռելիեֆով և ջրբաժան լեռնաբազուկների հովիտների ու կիրճերի նկատմամբ մեծ՝ մինչև 1500-1700 մ բարձրություններով:

Ուսումնասիրվող տեղամասերի օգտակար հանածոն կապված է Արաքս գետի ձախափնյա անանուն չորահուններում կուտակված ժամանակակից այլուվիալ-պրոլյուվիալ նստվածքների հետ և հանդիսանում է գետահեղեղատային տիպի երևակում:

Տեղամասերի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից դելյուվիալ կավավազային այլուվիալ-պրոլյուվիալ ավազակոպճային նստվածքները, որոնք հիմնատակվում են ստորին օլիգոցենի հասակի ինտրուզիվ ապարներով:

Հետախուզվող երևակման տեղամասերի ավազակոպճային կուտակները ներկայացված են Արաքս գետի ձախափնյա սելավատար-չորահունների ուղղությամբ ձգվող շերտանման մարմինների ձևով: 1-ին տեղամասն ունի մոտ 600 մ ձգվածություն և մինչև 50-60 մ լայնություն, իսկ 2-րդ տեղամասը՝ մոտ 200 մ ձգվածություն և 35-ից մինչև 140 մ լայնություն: Ավազակոպճային կուտակները հունով դեպի վեր աստիճանաբար նվազում և սեպանում են:

Չրջանի հիմնական ջրային զարկերակը սահմանային Արաքս գետն է՝ իր Մեղրի, Վարդանիձոր վտակներով, և այլ անանուն և սակավաջուր՝ ամռան ամիսներին ջրազուրկ ձորակներով:

Չրջանի կլիման չափավոր ցամաքային է, իսկ ցածրադիր մասերում և գետահովիտներում՝ չոր մերձարևադարձային: Օդի ջերմաստիճանը ձմռանը՝ հունվար ամսին հասնում է մինչև  $-14^{\circ}\text{C}$ , իսկ ամռանը՝ օգոստոս ամսին, բարձրանում է մինչև  $+40$ -ից  $45^{\circ}\text{C}$ : Տարեկան միջին ջերմաստիճանը  $+12^{\circ}\text{C}$  է, տեղումների քանակը՝ 500-600 մմ/տարի: Քամու միջին տարեկան արագությունը կազմում է 1.3 մ/վրկ, հիմնականում՝ արևելյան, հարավ-արևելյան և հյուսիսային ուղղություններով:

Հետախուզվող տարածքը զուրկ է բուսականությունից և անտառային ծածկույթից: Աղքատ է նաև շրջանի կենդանական աշխարհը:

Հայցվող տարածքում հողաբուսական շերտը բացակայում է: Տարածքում բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, վտանգված էկոհամակարգեր, պատմամշակութային հուշարձաններ, անտառային տարածքները բացակայում են:

Տարածաշրջանն ընդգրկվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որտեղ սեյսմիկությունը՝ արտահայտված գրունտի հորիզոնական արագացմամբ, կազմում է 0.4 g:

Համաձայն նախնական հայտի տեղեկատվության երևակման տարածքում սողանքային երևույթներ չեն արձանագրվել:

Հայցվող տարածքի հողերի նպատակային նշանակությունը համայնքային սեփականության և այլ գործառնական նշանակության հողեր են:

Ուսումնասիրության համար հայցվող տարածքների ծայրակետերի կոորդինատներն են WGS-84 (ARMREF 02) կոորդինատային համակարգով՝

1-ին տեղամաս  
1. X- 4305385.886 Y - 8607521.499

2-րդ տեղամաս  
1. X- 4304616,23 Y - 8606424,25



2. X- 4305545.076	Y - 8607569.248	2. X- 4304694.274	Y - 8606419.500
3. X- 4305812.754	Y - 8607633.362	3. X- 4304800.775	Y - 8606448.935
4. X- 4306032.682	Y - 8607724.400	4. X- 4304787.838	Y - 8606473.221
5. X- 4306000.258	Y - 8607767.033	5. X- 4304628.618	Y - 8606491.517
6. X- 4305795.333	Y - 8607690.499		
7. X- 4305505.920	Y - 8607593.168		
8. X- 4305370.166	Y - 8607590.430		

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նպատակն է պարզել օգտակար հանածոյի պիտանելիությունը, որակական հատկանիշները և համապատասխանությունը՝ որպես շինարարական խճի և ավազի արտադրության հումք «Ավազ շինարարական և աշխատանքների համար» 8736-2014 ՀՍ ԳՈՍ-ի և «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարների վ շինարարական աշխատանքների համար» 8267-95 ԳՈՍ-ի պահանջներին:

Երկրաբանահանույթային աշխատանքներն իրականացվելու են 4.31 հա տարածքում տեղամասի (հանքավայրի) 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով: Այն նախատեսվում է կատարել նույն մասշտաբի տոպոգրաֆիական հիմքի վրա:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմվել է՝ նկատի ունենալով երևակման տեղամասերի պարզ երկրաբանական կառուցվածքը (1-ին խումբ), չափսերը, օգտակար հանածոյի շերտաձև մարմնի հզորությունը, ինչպես նաև «Ավազի և կոպիճի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգի» հանձնարարականները: Որպես հետախուզամիջոց ընտրվել է սյունակային հորատման հորատանցքերը և հետախուզահորերը: Հետախուզական փորվածքները տեղադրելու են հետախուզագծերի վրա՝ հորատանցքերով, որոնք նախատեսվում է անցնել չորահունների առանցքի կենտրոնական մասերում: Կբացվի, կուսումնասիրվի ու կնմուշարկվի ավազակոպճային կուտակը՝ դրա ամենահզոր մասում, իսկ հետախուզահորերով կիրականացվի կուտակի եզրագծումը:

Կախված տեղամասերի չափերից ու դրանց եզրագծերից՝ 1-ին տեղամասի հետախուզումը կիրականացվի 5 հետախուզագծերով՝ միմյանցից 140-170 մ հեռավորությամբ, իսկ 2-րդ տեղամասում՝ 3 հետախուզագծերով՝ 65-75 մ հեռավորությամբ: Հետախուզագծերի վրա փորվածքների հեռավորությունը չի գերազանցում 60 մ, ինչը թույլ կտա դրանց վրա, պաշարների հաշվարկման համար, լիարժեք կտրվածքների կառուցումը: Ավազակոպճային նստվածքների ակնկալվող հզորության հաշվառմամբ հորատանցքերի խորությունն ընտրվել է 12 մ, իսկ հետախուզահորերինը՝ 5 մ:

Օգտակար հանածոյի մարմնի լրիվ հզորության բացման, ուսումնասիրման ու նմուշարկման համար նախատեսվում է կատարել մեխանիկական սյունակային հորատում:

Նախատեսվում է հորատել մինչև 12 մ խորության 8 հորատանցքեր (1-ին և 2-րդ տեղամասերում համապատասխանաբար՝ 6 և 2 հորատանցք), 96 գծ.մ ընդհանուր խորությամբ:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հորատանցքերը՝ ընդհանուր 96 մ երկարությամբ, և հետախուզահորերը՝ ընդհանուր 50 մ երկարությամբ:



Հորատման հրապարակների կառուցում չի նախատեսվում՝ տեղամասերի ռելիեֆը մեղմաթեք է: Տեղամասին մոտեցող ավտոճանապարհները բարենպաստ են, ուստի ճանապարհների նորոգում և կառուցում ևս չի նախատեսվում:

Օգտակար հանածոյի նմուշարկումը նախատեսվում է դրա հատիկային կազմի և որակական հատկանիշների պարզաբանման համար:

Հորատանցքերից ֆիզիկամեխանիկական ուսումնասիրությունների նպատակով նախատեսվում է վերցնել 8 հանուկային նմուշ (մեկական յուրաքանչյուր փորվածքից): ԱԿԽ-ի կուտակի հզորությունը կենտրոնական մասում ակնկալվում է մինչև 10 մ:

Հետախուզահորերից նախատեսվում է վերցնել 10 նմուշ՝ ակոսային եղանակով: Նմուշները նախատեսվում է վերցնել հետախուզահորի պատից՝ օգտակար հաստվածքի ամբողջ հզորությամբ:

Յուրաքանչյուր տեղամասի համար 3 նմուշներ կենթարկվեն նաև քիմիական անալիզի՝ ընդամենը 6 նմուշ: Միներալային կազմի ուսումնասիրությունների համար կվերցվեն յուրաքանչյուր տեղամասից 2-ական նմուշ՝ ընդամենը 4 նմուշ:

Տեղամասերում ձևավորված հետախուզական ցանցի խտությունը թույլ կտա տալ օգտակար հանածոյի որակական և քանակական գնահատականը, իսկ պաշարներն՝ ըստ հետախուզվածությամբ, գնահատել A կարգով:

Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում վերցված բոլոր նմուշների լաբորատոր հետազոտություններն իրականացվելու են հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

Տեղամասի ջրաերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով դաշտային աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ: Յուրաքանչյուր հորատանցքում նախատեսվում է հետևել ջրի առկայությանը և առկայության դեպքում ֆիքսել գետնաջրերի հայելու խորությունը:

Աշխատանքների ավարտից հետո, նախատեսվում է խախտված տարածքների բարեկարգման (ռեկուլտիվացիայի) աշխատանքներ, որոնք կատարվելու են ձեռքով՝ III կարգի ապարներով:

Բարեկարգման ենթակա հետախուզահորերի հնդհանուր մակերեսը կազմում է՝  $12 \times 1.5 = 18.0$  մ<sup>2</sup>, իսկ ծավալը՝  $18.0 \times 0.2 = 3.6$  մ<sup>3</sup>: Խախտված մակերեսների վերականգնման, բարեկարգման համար հաշվարկային գումարը կկազմի՝ 12 000 դրամ:

Խախտված տարածքների վերականգնման և բարեկարգման նպատակով ընկերության կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կտրամադրվի 100.0 հազ. ՀՀ դրամ:

Ուսումնասիրման աշխատանքներով ճանապարհների կառուցում չի նախատեսվում, քանի որ տեղանքում գոյություն ունեն դաշտամիջյան գրունտային բարվոք ճանապարհներ:

Համաձայն ժամանակացույցի աշխատանքների կատարման ժամկետները սահմանված են՝ 2024թ. 3-րդ եռամսյակից մինչև 2025թ. 4-րդ եռամսյակը:



Դաշտային աշխատանքների ընթացքում խմելու և տեխնիկական նպատակով օգտագործվելիք ջուրը կվերցվի «Վեոլիա Ջուր» և «Սյունիք» ՋՕ ընկերությունների Մեղրիի տեղամասերից, որոնց հետ Ընկերության կողմից ձեռք է բերվել ՋՕ պայմանագրեր կնքելու նախնական համաձայնություն:

Համաձայն թափոնների կառավարման պլանի՝ երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ երևակման տեղամասերում ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանա, քանի որ տարածքում մակաբացման շերտը բացակայում է, նախատեսված 12 հետախուզահորերից հանված ապարները երկրաբանական փաստագրումից և նմուշարկումից հետո անմիջապես հետ են լցվելու, հորատանցքերի հորատման համար հորատահրապարակներ չեն կառուցվելու:

Նախատեսվող ուսումնասիրության աշխատանքների ժամանակ տեղամասերում բացառվում է բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոնների (մեխանիզմների յուղեր, քսայուղեր, մետաղաջարդոն, անվադողեր) առաջացումը, քանի որ հորատման աշխատանքներն իրականացվելու են շատ կարճ ժամանակահատվածում, տեխնիկայի տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը կատարվելու է տեղամասերից դուրս՝ համապատասխան սպասարկման կետերում:

Համաձայն նախնական հայտի՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները կապված են լինելու օդային ավազանի, հողային ռեսուրսների հնարավոր աղտոտման, բուսական և կենդանական աշխարհի, լանդշաֆտային ամբողջականության պահպանման հետ: Դաշտային աշխատանքների կարճատև լինելու հանգամանքով /ընդամենը 1 ամիս/ պայմանավորված՝ մեխանիզմների շահագործումից առաջացած վնասակար ծխագազերը, հորատման ընթացքում առաջացող արտանետումները և աղմուկի մակարդակը չեն գերազանցելու սահմանային թույլատրելի նորմերը:

Նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր և մոնիթորինգ:

Նախատեսվում է իրականացնել՝

- վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են հարակից բնակավայրերում՝ համապատասխան ծառայություն մատուցող կայաններում,
- աշխատանքների ժամանակ կիրառվող սարքավորումների և մեքենաների վրա արտաթորվող թունավոր նյութերի ֆիլտրերի տեղադրում,
- փոշենստեցման նպատակով տեղամասին մոտեցնող ճանապարհի ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով՝ պայմանագրային հիմունքերով,



- կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողություններում, 0.3 մ<sup>3</sup>/տարի 1 մարդու համար/ տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր,
- օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով,
- գործունեության և հարակից տարածքում ընկերության կողմից կատարվելու է մոնիթորինգ /կենսաբազմազանության դիտարկում/, առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով,
- մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ երկրաբանական ուսումնասիրության ընթացքում՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
- աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն և այլն:  
Բնապահպանական միջոցառումների համար՝ յուրաքանչյուր տեղամասի համար նախատեսվում է տարեկան մասնահանել 150.0 հազ. ՀՀ դրամ:

**Պատճառաբանական եզրահանգումներ.** Երկրաբանահետախուզական աշխատանքների (դաշտային աշխատանքներ) կատարման ժամանակահատվածը լինելու է կարճատև, ուստի ուսումնասիրության ընթացքում ազդեցությունները լինելու են ժամանակավոր և տեղային: Հայտում ներառված են աղմուկի մակարդակի, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, թափոնների կառավարման, խախտված տարածքների ռեկուլտիվացիայի և մոնիթորինգի իրականացման բավարար միջոցառումներ:

Հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ներքին գործերի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Սյունիքի մարզպետարանը:

Փորձաքննության ընթացքում պարզվել է, որ, ըստ կադաստրային ծածկագրերի, Սյունիքի մարզի Մեղրիի ավազակոպճային խառնուրդի երևակման 1-ին և 2-րդ տեղամասերը հատում են միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհները, իսկ 2-րդ տեղամասի հարավային մասը հատում է նաև նախկինում գործող երկաթգծի հետ հատումը բացառելու նպատակով՝ հայտի լրամշակումների արդյունքում՝ 2-րդ տեղամասի հարավային սահմանը տեղափոխվել է դեպի հյուսիս՝ 50 մ-ով, ինչի արդյունքում 2-րդ տեղամասի մակերեսը կրճատվել է 0.5 հա-ով: Արդյունքում ապահովվել է «Երկաթուղային տրանսպորտի մասին» օրենքի պահանջներ: 2-րդ տեղամասը գտնվում է գործող Մ-2 ավտոճանապարհից 70 մ, իսկ ապագայում նախատեսվող երկաթգծից 60 մ հեռավորության վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական



ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

### Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, դրանց չբավարարելու դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:
- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մոնիթորինգ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
- Ապահովել խախտված տարածքների ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ պահպանության միջոցառումներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, դադարեցնել աշխատանքերը՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

### ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ԶԱՆԳԵԶՈՒՐ ԼՈԳԻՍՏԻԿԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Մեղրիի ավազակոպճային խառնուրդի երևակման 1-ին և 2-րդ տեղամասերում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝



Երիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝



Արմինե Վարդանյան